ՈՒՍՈՒՑՉԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄ, հուլիս, 2023

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԹԵՍՏ

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Ներկայացվում է քննության թեստի էլեկտրոնային բուկլետը:
Թեստի առավելագույն միավորը 70 է:
Թեստը լրացնելու համար տրվում է 4 ժամ:
Ուշադրությո՛ւն. անհասկանալի ձեռագրով աշխատանքը չի ստուգվի:

Հաջորդ էջ անցնելու և հետ դառնալու համար կարող եք օգտվել ստեղնաշարի այն կոճակներից, որոնց վրա սլաքներ են պատկերված:

Մաղթում ենք հաջողություն:

Հայոց լեզու (35 միավոր)

(1) 1. **Կարդացե՛ք նախադասությունը.** *Վահանն ասաց. «Գնամ իմ տատին էլ տենամ, մի երկու հաց էլ իրեն տամ»:*

Տվյալ նախադասության մեջ օգտագործված է՝

ա) Բարբառ:

բ) Հնաբանություն:

գ) Նորաբանություն:

դ) Օտարաբանություն:

(1) **2. Պարզե՛ք՝ ո՞ր նախադասության մեջ են օգտագործված համանուններ:**

ա) Այգաբացի հետ գնում էր ու մինչև մյուս օրը այգաբացին մնում էր այնտեղ:

բ) Դա իմ կողմից խիզախ և համարձակ քայլ էր, որին ոչ ոք չէր սպասում:

գ) Մատաղ սերունդը մատաղ անելու ավանդույթի մասին միայն գրքերից գիտի:

դ) Ուսանողի ձեռքին կարճ ու երկար, հաստ ու բարակ գրքեր կային:

(1) **3. Պարզե՛ք՝ ո՞ր նախադասության մեջ կա ուղղագրական սխալ:**

ա) Ամեն տարի Թբիլիսիում ավանդաբար նշվում է վարդատոնը։

բ) Հայսմավուրքը սրբոց կյանքի ու վարքի մասին ժողովածու է։

գ) Պատմության բաց դասը նվիրված էր Արշակունյաց հարստությանը։

դ) Ցուցահանդեսում թարգմանիչների աշխատանքները վաճառվել են թանկ գնով։

(1) **4. Տրված դրույթներից ո՞րն է ճիշտ:**

Հնչյունափոխության ենթարկվում են.

ա) Բոլոր բազմավանկ բառերը:

բ) *Է, է, ու, ի* ձայնավորները և *յա, այ, ույ* երկհնչյունները:

գ) Միայն միավանկ բառերը:

դ) *Յա* երկհնչյունը, երբ գրվում է *իա* կամ *եա* տառակապակցությամբ:

(1) **5. Պարզե՛ք՝ ո՞ր նախադասության մեջ է սխալմամբ օգտագործված փոխադարձ դերանունը։**

ա) Այդ դեպքից հետո նրանք չեն խոսել իրար։

բ) Դասի ժամանակ ընկերները հեռանում էին իրարից։

գ) Երեխաները օրինակ են վերցնում միմյանցից։

դ) Նրանք փսփսում էին իրար մեջ։

(1) **6. Պարզե՛ք՝ ո՞ր քերականական կարգերով են տարբերվում տվյալ բայերը.**

«զբաղվեր» և «զբաղեցնում է»:

ա) Դեմք ու թիվ:

բ) Եղանակ ու դեմք:

գ) Ժամանակ ու եղանակ:

դ) Ժամանակ ու թիվ:

(1) **7. Պարզե՛ք՝ թվարկվածներից ո՞րն է ենթակայական դերբայ։**

ա) Բանագող։

բ) Լրագրող։

գ) Կարճափող։

դ) Քանդող։

(1) **8. Պարզե՛ք՝ ո՞ր նախադասության մեջ է «որ» բառը կատարում շաղկապի ֆունկցիա։**

ա) Հուզված էին. չէ՞ որ նման քայլի չէին սպասում նրանից։

բ) Մայրս գիտի, որ գարեջուր շատ եմ սիրում։

գ) Մարդ չգիտի՝ ձեր որ մի ասածին հավատա։

դ) Փողոցում ինչ-որ կրակոց լսվեց։

(1) 9. **Ո՞ր նախադասության մեջ անուղղակի խնդիրը տրական հոլովով արտահայտված չէ:**

ա) Գիրքը տվեցի ընկերոջս։

բ) Հորից վերցնում եմ նոր թերթը։

գ) Նա իր նոր գիրքը փոխանցեց գրադարանին։

դ) Նա հիացած նայում էր Փիրոսմանիի նկարին։

(1) **10. Պարզե՛ք՝ ո՞ր նախադասության մեջ կա սխալ:**

ա) Այն կազմված է գլխավորապես հինգ-վեց տողից:

բ) Աշակերտների խումբը կանգնած էր բակում:

գ) Մի վայրկյան ևս, և ամենքը պիտի իսպառ ջնջվեր:

դ) Յուրաքանչյուր գլուխ սկսվում է բնաբանով:

(2) 11. **Աշակերտը գրել է.** *Ես խոնարհվեցի, դեմքս մոտեցրեցի նրան և ագահորեն սկսեցի շնչել գաղջ հողի բույրը։*

- Ցո՛ւյց տվեք նրան՝ ինչպիսի սխալ է թույլ տրված նախադասության մեջ։
- Բացատրե՛ք աշակերտին՝ ինչ պետք է իմանա, որպեսզի նմանատիպ սխալ թույլ չտա։

(2) **12. Աշակերտը գրել է.** *Գուսանը մեղմիկ զարկում էր լարին և հեծկլտում էր լարը և պատմում էր սիրո մի փոքրիկ վեպ:*

- Ցո՛ւյց տվեք նրան՝ ինչպիսի սխալ է թույլ տրված նախադասության մեջ:
- Բացատրե՛ք աշակերտին՝ ինչ պետք է իմանա, որպեսզի նմանատիպ սխալ թույլ չտա:

(4) **13. Դուք պետք է աշակերտներին բացատրեք նախադասության բազմակի անդամները:**

I – Նշե՛ք նախադասության բազմակի անդամներին վերաբերող երկու-երեք կանոն, որոնց պետք է տիրապետեն աշակերտները:

II – Կազմե՛ք երկու հարց՝ ներկայացնելով նախադասության բազմակի անդամներին վերաբերող օրինակներ, որոնք ճիշտ են գրական լեզվի կանոնների տեսակետից:

(7) **14. Կարդացե՛ք Հակոբ Կարապենցի «Ազատ խոսքի մասին» ստեղծագործությունից հետևյալ հատվածը.**

«Առանց խոսքի չկա ազատություն: Չկա ներքին ազատություն: Չկա անհատական ու հավաքական ազատություն: Իսկ մե՞նք: Մեր գրականությունը՝ ի սփյուռս աշխարհի, տակավին դեգերում է ինքնակերտ ու պարտադրված պայմանականությունների մթագնած արահետներում: Հաճախ ավանդականը շփոթում ենք բարոյականության հետ, երբ բարոյագիտության համար ունենք դպրոց ու եկեղեցի...

Երբ անազատ է խոսքը, անազա՛տ է գրականությունը: Անազատ եմ ես:

Երբ աշխարհի որևէ անկյունում ճնշվում է մեկ հոգու խոսքը, ճնշվում է նաև ի՛մ խոսքը: Որովհետև մարդկության ընտանիքի մեկ անդամի կաշկանդումը կաշկանդումն է համայն մարդկության»:

I – Ո՞րն է այս տեքստի գլխավոր ասելիքը:

II – Ձևակերպե՛ք մեկական փաստարկ՝ մեկը տեքստում ներկայացված կարծիքը հաստատելու, մյուսը՝ հերքելու համար:

III – Շարադրե՛ք Ձեր դատողություններն այն մասին, թե որ փաստարկն է Ձեզ համար ընդունելի և ինչու:

Հաշվի՛ առեք, որ այս առաջադրանքի պատասխաններում Ձեր թույլ տված ուղղագրական, կետադրական, քերականական կամ ոճաբանական սխալի համար 1 միավոր կհանվի:

(10) 15. **Կարդացե՛ք աշակերտի գրավոր աշխատանքը և հետևե՛ք հետևյալ հրահանգներին.**

I – Գնահատե՛ք աշակերտի աշխատանքը՝ ըստ I չափանիշի, գրե՛ք համապատասխան միավոր և բնագրից բերե՛ք համապատասխան օրինակ։

II – Գնահատե՛ք աշակերտի աշխատանքը՝ ըստ II չափանիշի, գրե՛ք համապատասխան միավոր և բնագրից բերե՛ք համապատասխան օրինակ։

III – 1. Գնահատե՛ք աշակերտի աշխատանքը՝ ըստ III չափանիշի, գրե՛ք համապատասխան միավոր և բնագրից բերե՛ք համապատասխան օրինակներ։

2. Որոշե՛ք յուրաքանչյուր սխալի տեսակը (ուղղագրական, ձևաբանական, կետադրական, շարահյուսական)։

Գնահատման չափանիշներ

N	*Չափանիշներ*	*Չափանիշների պարզաբանում*	*Միավոր*
I	Դատողության հիմնավորում (փաստարկ և եզրակացություն)	ա) Դատողությունը հստակ փաստարկված է, փաստարկները հիմնավորված են համապատասխան օրինակներով: բ) Դատողությունը մասամբ է փաստարկված, հիմնավորված չէ համապատասխան օրինակներով կամ թույլ է տրված փաստացի սխալ: գ) Տեքստը ճիշտ չի հասկացվել, դատողությունը համոզիչ չէ, օրինակները նույնպես չեն համապատասխանում դատողությանը:	2 1 0
II	Բառապաշար և ոճ	ա) Միտքը ճիշտ և հստակ է ձևակերպված, ոճաբանական առումով սխալներ չկան: բ) Միտքը ճիշտ է ձևակերպված, բայց բառապաշարն աղքատ է, կամ հանդիպում են ոճաբանական թերություններ: գ) Միտքը հիմնականում հասկանալի է, բայց գրվածքի ոճը խրթին է, հանդիպում են բառագործածության սխալներ:	2 1 0
III	Ուղղագրություն, քերականություն, կետադրություն	ա) Այս կարգի սխալների թիվը երեքից ավելի չէ: բ) Այս կարգի սխալների թիվը վեցից ավելի չէ: գ) Այս կարգի սխալների թիվը վեցից ավելի է:	2 1 0

Աշակերտին տրված առաջադրանք.

Գոյություն ունեն այնպիսի ավանդույթներ, որոնց պահպանումը ժամանակակից կյանքում անձնական իրավունքների սահմանափակման պատճառ է դառնում:

Համաձա՞յն եք արդյոք այս կարծիքին: Հաստատե՛ք կամ հերքե՛ք այն՝ բերելով համապատասխան փաստարկներ:

Աշակերտի շարադրությունը

Վաղաժամ ամուսնություններն ու աղջիկների առևանգումը շարունակում են արդիական խնդիր մնալ:

Տարբեր մշակույթներում և կրոններում, տարբեր ժողովուրդների մոտ և տարբեր ժամանակներում կարելի է գտնել իրարից տարբեր պատկերացումներ այն մասին թե որ ամուսնությունն է պետք համարել չափազանց վաղ և ինչու: Դարեր շարունակ ժամանակակից պատկերացումներով վաղ ամուսնությունները կնքվել են ախքատ, զարգացող երկրներում և վատ ապահովված ընտանիքներում:

Շատ վայրերում այսօր չափազանց մեծ խնդիր է վաղաժամ ամուսնությունը. դեռ չափահաս չդարձած աղջիկներին ամուսնացնում են երբեմն իրենց կամքով, շատ հաճախ նաև՝ ստիպողաբար, խորտակելով նրանց երազանքները, կիսատ թողնելով մանկությունը: Հին ավանդույթներից հետևելով՝ առևանգում են ընդամենը 15, 16, երբեմն անգամ 13 տարեկան աղջիկներին՝ բազմիցս անգամ ոտնահարելով նրանց իրավունքները:

Հին սերնդի մտածելակերպին զոհ գնալով՝ նրանք մեծանում են այն մտքով, որ պետք է ամուսնանան 18 տարեկանում կամ ավելի վաղ, այլապես կկորցնեն իրենց ապագայի հեռանկարը, որը բացառապես ընտանիք կազմելու, մայր դառնալու հետ է կապվում:

Ամուսնանալ և ընտանիք ունենալ, անշուշտ, պետք է ու ցանկալի, բայց մտածված ու անգիտակցաբար և ոչ թե սեփական կամքից հակառակ, ավանդույթներից ելնելով կամ ինչ-որ կարծրատիպեր ու կարծիքներ փոխելու համար:

Յուրաքանչյուր աղջիկ ազատ ապրելու, ինքնուրույն ընտրություն կատարելու, կրթություն ստանալու և ինքն իր ուզած ապագան կառուցելու իրավունք ունի:

Հայ գրականություն (20 միավոր)

(1) **16. Աշակերտը հարցնում է.** 5-րդ դարի պատմագրության մեջ ինչո՞վ է աչքի ընկնում Մովսես Խորենացու «Պատմությունը»:

Ո՞ր տարբերակը չեք օգտագործի՝ աշակերտին պատասխանելու համար:

ա) Մովսես Խորենացին առաջինն էր, որ պատմական իրադարձությունները դասավորեց ժամանակագրական հաջորդականությամբ:

բ) Մովսես Խորենացին նշում է, որ իր «Պատմության» որոշ դրվագներ ժողովրդական ծագում ունեն և պահպանվում են գուսանների շրջանում:

գ) Մովսես Խորենացու «Պատմությունը» միակն է, որ ներկայացնում է քրիստոնեության մուտքը նկարագրող իրադարձությունները:

դ) Մովսես Խորենացու «Պատմությունը» միակն է, որ սկսվում է հայ ժողովրդի ծննդաբանությունից:

(1) **17. Աշակերտը հարցնում է.** Պահպանվե՞լ է Փավստոս Բուզանդի «Հայոց պատմության» ինքնագիր ձեռագիրը։

Ո՞ր տարբերակը կօգտագործեք՝ աշակերտին պատասխանելու համար։

ա) Այո, պահպանվել է, այն թվագրվում է 5-րդ դարի 70-ական թթ.։

բ) Այո, պահպանվել է, հետազոտողներն այն թվագրում են 387 թ.։

գ) Ոչ, չի պահպանվել, ամենահին ձեռագիրը թվագրվում է 1599 թ.։

դ) Ոչ, չի պահպանվել, ամենահին ձեռագիրը թվագրվում է 17-րդ դարով։

(1) 18. **Հայկական ժողովրդական «Սասունցի Դավիթ» էպոսում Խաչ Պատերազմին քրիստոնեության խորհրդանիշ լինելուց բացի առասպելական ինչպիսի՞ հատկանիշ ունի:**

ա) Այն իր մշտական տեղն ունի բոլոր քրիստոնեական եկեղեցիներում:

բ) Այն կարող է թռչել և ճանապարհ ցույց տալ իրեն հետևողներին:

գ) Այն պահպանում և պաշտպանում է հերոսին, քանի դեռ հերոսը փոքր է:

դ) Հերոսի երդմնազանց լինելու դեպքում այն վերածվում է հերոսի խոցելի տեղի:

(1) **19. Աշակերտը հարցնում է.** Ինչո՞վ են տարբերվում Վարդան Այգեկցու առակները Մխիթար Գոշի առակներից։

Ո՞ր տարբերակը կօգտագործեք՝ աշակերտին պատասխանելու համար։

ա) Մխիթար Գոշը մանրամասն նկարագրում է բույսերը, մինչդեռ Վարդան Այգեկցու առակներում բույսերի նկարագրություն չկա։

բ) Մխիթար Գոշն իր առակներում օգտագործել է բանահյուսական տարրեր ու հունական առասպելաբանությունը, մինչդեռ Վարդան Այգեկցու առակներն ունեն կրոնափիլիսոփայական բովանդակություն։

գ) Վարդան Այգեկցին թարգմանել է Եզոպոսի առակները, մինչդեռ Մխիթար Գոշը օգտվել է ժողովրդական բանահյուսությունից։

դ) Վարդան Այգեկցու առակները ստեղծված են պարզ լեզվով և ի տարբերություն Մխիթար Գոշի առակների, դրանց չի հաջորդում պատմվածքի հեղինակային մեկնաբանությունը։

(1) **20. Պատմական ո՞ր իրադարձության պատճառով Խաչատուր Աբովյանը չկարողացավ ուսումը շարունակել ո՛չ Ռուսաստանում, ո՛չ էլ Եվրոպայում:**

ա) 1804-1813 թթ. ռուս-պարսկական պատերազմի պատճառով:

բ) 1806-1812 թթ. ռուս-թուրքական պատերազմի պատճառով:

գ) 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի պատճառով:

դ) 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի պատճառով:

(1) **21. Ռափայել Պատկանյանն իր «Հայ պատանին երգում է» բանաստեղծության մեջ գրում է.**

«Ձեռքումս ունիմ բահ ու հրացան, Սրրտումըս ունիմ ազնիվ խորհուրդներ»:

Ինչի՞ խորհդանիշներ են բահն ու հրացանը:

ա) Երկրի և հարազատ որդիների սիրո:

բ) Հայրենասիրության և ինքնապահպանման:

գ) Սիրո և բարեկամության:

դ) Քաջության և ազատության:

(1) **22. Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները» վեպը ուսումնասիրելիս աշակերտը հարցրեց.**

«Ո՞րն է հեղինակի հիմնական նպատակն այս վեպում»։

Ո՞ր տարբերակը կօգտագործեք՝ աշակերտին պատասխանելու համար։

ա) Հեղինակի հիմնական նպատակը «մեծապատիվ մուրացկաններին» ծաղրելը, երկրի թշվառ վիճակի մեջ նրանց մեղադրելն է։

բ) Հեղինակի հիմնական նպատակը ոչ այնքան «մեծապատիվ մուրացկաններին» ծաղրելը, որքան նրանց թշվառ վիճակը և հարուստների անտարբերությունը ներկայացնելն է։

գ) Հեղինակի հիմնական նպատակն ապաշնորհ բանաստեղծներին ծաղրելն է, որովհետև նրանք քիչ էին անդրադառնում հայ ժողովրդի պատմության հերոսական դրվագներին։

դ) Հեղինակի հիմնական նպատակն է հավասարապես ծաղրել և՛ իրենց «ձիրքը» վաճառող մտավորականներին, և՛ ազգի ճակատագրով չմտահոգվող մեծատուններին։

(1) **23. Գաբրիել Սունդուկյանի ստեղծագործությունը ուսումնասիրելիս աշակերտը հարցնում է.**

Գաբրիել Սունդուկյանի պիեսներում հասարակական հարաբերությունների առումով ինչպիսի՞ շեշտադրումներ են արվում:

Ո՞ր տարբերակը կօգտագործեք՝ աշակերտին պատասխանելու համար:

ա) Հեղինակը պիեսներում բնութագրում է առաջադեմ երիտասարդ սերնդին և ցույց է տալիս, թե ինչպես են նրանց գաղափարները ազդում հասարակության վրա:

բ) Հեղինակը պիեսներում ներկայացնում է կրթության պակասով պայմանավորված խնդիրները և ցույց է տալիս դրանք հաղթահարելու ուղիները:

գ) Հեղինակը պիեսներում ներկայացնում է սոցիալական անհավասարության խնդիրը և քննադատում է վաճառական-պաշտոնյաների ապրելակերպը:

դ) Հեղինակի պիեսները կառուցված են սիրո պատմությունների վրա և ցույց են տալիս, թե ինչպես է սերը հաղթահարում բոլոր տեսակի խնդիրները:

(1) **24. Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» պատմավեպն ուսումնասիրելիս աշակերտը հարցնում է.**

Ինչո՞ւ է ստեղծագործության գլխավոր հերոսը՝ Գևորգ Մարզպետունին, երդվում Մաշտոց կաթողիկոսի գերեզմանի մոտ, այլ ոչ արաբների կողմից դաժանաբար սպանված Սմբատ Ա թագավորի շիրմին։

Ո՞ր տարբերակը կօգտագործեք՝ աշակերտին պատասխանելու համար։

ա) Գևորգ Մարզպետունին գտնում էր, որ եկեղեցին և նրա առաջնորդը պետության կայունության և միասնության խորհրդանիշներն են։

բ) Գևորգ Մարզպետունին կարծում էր, որ առանց կաթողիկոսի օրհնության չէր կարող հաջողության հասնել ճակատամարտում։

գ) Գևորգ Մարզպետունին մեծ սեր և հարգանք էր տածում լուսահոգի կաթողիկոսի նկատմամբ։

դ) Գևորգ Մարզպետունին չէր երկրպագում արաբների կողմից դաժանաբար սպանված Սմբատ Ա թագավորին։

(1) **25. Գրիգոր Զոհրապի կյանքն ու ստեղծագործությունն ուսումնասիրելիս աշակերտը հարցնում է.**

Ի՞նչ նպատակ էր հետապնդում Գրիգոր Զոհրապի ու նրա համախոհների հիմնած «Մասիս» գրական թերթը:

Ո՞ր տարբերակը կօգտագործեք՝ աշակերտին պատասխանելու համար:

ա) «Մասիս» թերթը նպատակ ուներ Կոստանդնուպոլսի հայերին հիշեցնել պատմական անցյալը:

բ) «Մասիս» թերթի գլխավոր նպատակը հայ ժողովրդի հերոսական գաղափարներին անդրադառնալն էր:

գ) «Մասիս» թերթի գլխավոր նպատակը տեղի հայերին քաղաքական նորությունների մասին իրազեկելն էր:

դ) «Մասիս» թերթի միջոցով հանրությունը ծանոթանում էր ժամանակի հայ գրողների ստեղծագործություններին:

(1) 26. **«Աննա Սարոյան» վիպակում ի՞նչ է ցանկանում ասել Նար-Դոսն ընթերցողին, երբ ներկայացնում է հերոսի և ցրտահարված ճանճերի տեսարանը:**

ա) Հեղինակը ցանկանում է ցույց տալ ընթերցողին, թե ինչպիսի դաժան բնավորություն ունի գլխավոր հերոսը:

բ) Հեղինակը ցույց է տալիս ընթերցողին, որ գլխավոր հերոսը զվարճանում է միջատներին սպանելով:

գ) Հեղինակն ընդգծում է այն փաստը, որ միևնույն է, բոլորի «վերջը խո մահ է…»:

դ) Հեղինակն ընթերցողին ցույց է տալիս գլխավոր հերոսի հոգեկան ծանր վիճակը:

(1) **27. Ալեքսանդր Շիրվանզադեի «Քառս» վեպն ուսումնասիրելիս աշակերտը հարցրեց.**

«Ովքե՞ր էին «ոսկի երիտասարդության» ներկայացուցիչները»:

Ներկայացված տարբերակներից ո՞րը կօգտագործեք՝ աշակերտին պատասխանելու համար:

ա) Բարձր պաշտոններ զբաղեցնող երիտասարդներ էին, որոնց հասարակական կյանքը առհասարակ չէր հետաքրքրում՝ մղելով նրանց անդադար փող աշխատելու:

բ) Նրանք այն երիտասարդներն էին, ովքեր հարուստների զավակներ չէին և հարստացել էին իրենց սեփական ուժերով:

գ) Նրանք այն երիտասարդներն էին, որոնք երազում էին դառնալ ֆինանսական հսկաներ և իրենց փողի ուժով կառավարել ամենքին:

դ) Նրանք էժան հաճույքների հետևից վազող երիտասարդներ էին, որոնք կարծում էին, թե իրենց ծնողների կուտակածը վատնելը պախարակելի չէ:

(1) **28. Վահրամ Փափազյանը Լևոն Շանթի կյանքն ու ստեղծագործությունը քննարկելիս ասում է.**

«Կարդա նրա «Կայսրը», «Հին աստվածները», «Ինկած բերդի իշխանուհին» և կտեսնես, թե նախկին ողորմելի մելոդրամատիստը ինչպիսի վիթխարի դրամատուրգի է հանգել իր կյանքի վերջին օրերին: Նույնը կասեի ... համար»:

Ո՞ր հայտնի դրամատուրգի հետ է զուգահեռ անցկացնում Վահրամ Փափազյանը Լևոն Շանթի ստեղծագործությունը քննարկելիս:

ա) Ալեքսանդր Շիրվանզադեի հետ:

բ) Գաբրիել Սունդուկյանի հետ:

գ) Ռոբերտ Գրինի հետ:

դ) Ուիլյամ Շեքսպիրի հետ:

(1) **29. Աշակերտը Թբիլիսիում ապրած և ստեղծագործած հայ գրողներին թվարկելիս նշեց մի շարք անուններ:**

Ո՞ր անունը չպիտի լինի նշված շարքում:

ա) Գաբրիել Սունդուկյան:

բ) Եղիշե Չարենց:

գ) Հովհաննես Թումանյան:

դ) Սայաթ-Նովա:

(1) **30. Ինչո՞ւ է Ավետիք Իսահակյանն Ակսել Բակունցի ստեղծագործությունը գնահատում հետևյալ խոսքերով.**

«Այնպես նուրբ են հյուսված այս պատմվածքները... այնպես նուրբ, կարծես հեքիաթ են, կարծես երազ ես տեսնում, այնպես կախարդորեն սուզվում են իրար մեջ անցյալն ու ներկան, որ հուշը դառնում է ներկա և իրական, ներկան դառնում է երազ»:

ա) Ակսել Բակունցը առանձնահատուկ նրբագեղությամբ էր կիրառում գեղարվեստական միջոցները:

բ) Ակսել Բակունցը ժամանակից առաջ էր գնում՝ կանխատեսելով ապագան:

գ) Ակսել Բակունցը հիմնականում գրում էր անիրական պատմությունների մասին:

դ) Ակսել Բակունցը հիմնականում ստեղծում էր հուշագրական գրականություն:

(1) **31. Ո՞ւմ է դիմում Դերենիկ Դեմիրճյանի հերոսը հետևյալ խոսքերով.**

«Ոչինչ չեմ ուզում ձեզնից, — ասում է նա իր նեղիչներին, — ձեզ լինի ձեր լուծը, ձեզ լինի ձեր երջանկությունը, գնացե՛ք, ապրեցե՛ք խաղաղ և երջանիկ: Եթե դուք սիրում եք կյանքը, ես սիրում եմ կյանքից ավելի թանկ բանը՝ Ազատությունը...»:

ա) Անհնազանդ երիտասարդ սերնդին:

բ) Իշխանության ներկայացուցիչներին:

գ) Ժողովրդի վրա բռնացող թշնամիներին:

դ) Հայրենիքին դավաճանող ազնվականներին:

(1) **32. Ըստ Ստեփան Զորյանի «Պապ թագավոր» վեպի՝ երիտասարդ արքան ներքին բարեփոխումներն անցկացնելիս հենարանային ուժ էր համարում.**

ա) Բյուզանդական կայսրությունը:

բ) Երկրի հոգևոր դասին:

գ) Հարկերից ազատված ժողովրդին:

դ) Տեղական ազնվականությանը:

(1) **33.** **Տվյալ բանաստեղծական տան մեջ գեղարվեստական ո՞ր միջոցին է դիմում հեղինակը գլխավոր հերոսի զգացմունքներն արտահայտելու համար։**

«Վերադարձեք Նինվե և ասացե՛ք Շամիրամին,

Թե բռնության շնչից սիրո ծաղիկը թառամեց,

Եվ նրա տեղ աճեց ատելության կաղնին։

Եվ ասացե՛ք, Արան սիրում է Նուարդին,

Պատրաստ է պահպանել նրա պատիվն անեղծ»։

ա) Այլաբանության։

բ) Համեմատության։

գ) Չափազանցության։

դ) Փոխաբերության։

(1) **34. Թվարկվածներից ո՞րը <u>չի համարվում</u> Միլվա Կապուտիկյանի պոեզիայի գլխավոր թեման։**

ա) Ազատության թեման։

բ) Բնության թեման։

գ) Հայրենիքի թեման։

դ) Սիրո հավերժության թեման։

(1) **35. Լևոն Խեչոյանի «Մև գիրք, ծանր բզեզ» վեպը նվիրված է.**

ա) Արցախի ազատամարտին:

բ) 1915 թվականի հայերի ցեղասպանությանը:

գ) Հոր մասին հիշողություններին:

դ) Սպիտակի երկրաշարժին:

Գեղարվեստական տեքստի ըմբռնում (15 միավոր)

Ուշադիր կարդացե՛ք Աղասի Այվազյանի «Սովորական մարդու գինը» ստեղծագործությունից բերված հատվածը.

Ավետիս Յափնջյանը որդին էր Կիրկոր Յափնջյանի, որը Կոստանդնուպոլսի նավամատույցում բեռնակիր էր, որդին էր բեռնակիր Յափնջիի: 1915 թվականի տխուր դեպքերը սկսվեցին Կոստանդնուպոլսի բեռնակիրներից: Նրանք ասես այն մազն էին, որի վրա վարսավիրը փորձում է նոր սրած իր ածելին: Պետք է ասել, որ ածելին հմտորեն կտրեց, և որովհետև բեռնակիրներից ոչինչ չէր կարելի վերցնել փալաններից բացի, նրանց կտորտանքները թափեցին ծովը: Ծովը հետո դուրս էր գցում ինչ-որ առարկաներ, և դժվար էր որոշել, թե ո՞ր փալանն էր հորը՝ Յափնջիինը, ու ո՞րը որդունը՝ Կիրկորինը: Ավետիս Յափնջյանը անդամալույծ ոտքերով քրոջը թաքցրեց մի պառավ լազի տանն ու տնտեսած չնչին դրամներով պահում էր խեղճ լազին ու անօգնական քրոջը: Հետագայում, երբ փոքր-ինչ հանդարտվեց իրադրությունը, նա, լազին վահանի պես դեմ անելով, խեղանդամ քրոջը՝ Գարանին, շալակն առած, սկսեց շարժվել Սև ծովի ափով դեպի արևելք: Լազը մնաց Էրզրումում, իսկ իրենք՝ Յափնջյան եղբայրն ու քույրը, շարունակեցին ճամփան: Դանդաղ, թաքնվելով, հաց ճարելով, Գարանը՝ միշտ մեջքին, միշտ աչքից հեռու, հետևողական ու համառորեն շարժվում էր Ավետիսը դեպի Կովկաս: Ավետիսի մեջքին վերքեր էին առաջացել, ողնաշարը ցավում էր, ու հենց այդ ցավն էր հիշեցնում նրան, որ բեռը թանկ է իր համար, բեռը մեծ է ու սիրելի՝ Յափնջիներից ամենաանպաշտպանը… Այդ ցավը տեսանող էր, կամք ուներ, իր խորհուրդն ուներ և ընդդիմաբանում էր Ավետիսի վրայից, Ավետիսին անհայտ շատ հեռուների հետ… Եվ ուժ էր տալիս ցավը, համառություն էին ծնում վերքերը, լողում էին Ավետիսի մկաններն ու շարժում նրան առաջ…

Ավետիսը չէր պատկերացնում իրենց հետագա վիճակը, բայց շարժվում էր, որովհետև մի բան էր միայն մնացել հիմա՝ շարժվել: Ու մեծագույն նպատակը դա էր… Գարանի համար դժվար էր. բացի այն, որ նա նեղվում էր եղբոր վրա բեռ լինելուց, նաև ցավում էին նրա անդամալույծ ոտքերը, որովայնն ու կուրծքը: Միակ բանը, որ կարող էր անել նա, դա երգելն էր երբեմն-երբեմն, մեղմ ու պարզ… Երգում էր շուրթերը եղբոր ականջի մեջ, երկնքի մասին, ծովի մասին, սարերի մասին… Երգում էր եղբոր ականջին, և ուրիշը չէր լսի, իրենցն էր երգն ու աշխարհինը…

Եվ էլի Գարանը եղբոր համար խոսում էր. «Ավետիս ջան, աղբար ջան, դու իմ մերոն ես, դու իմ հերոն ես… Խե՜ղճ Ավետիս ջան, լա՜վ Ավետիս ջան, քա՜ջ Ավետիս ջան, անբա՜խտ Ավետիս ջան…»:

Ճամփին պատահող մարդիկ թեպետ տեսել էին հիվանդ շալակած ուղևորի, բայց եղբոր ու քրոջ միացյալ կերպարանքը հիշեցնում էր **ՄԱՐԴՈՒ** վիճակը:

Նրանց տեսնողներից յուրաքանչյուրը մի ծանրություն էր կրում կամ սրտի խորքում, կամ մեջքի վրա, կամ հիշողության շերտերում, կամ երևակայության մեջ…

1916 թվականի փետրվարին Ավետիսը՝ քույրը շալակին, հասավ Բաթում: Լեռներում, ամայության մեջ Ավետիսի գերակա նմանակը կար՝ իրենից ավելի մոտ իրեն: Ավետիսը խոսում էր, պատասխան լսում նրանից: Դիմացը մի մեծ բան կար, և՛ ցայգաբացը, և՛ իրիկնամուտը, և՛ գիշերը՝ մգամութ և խոժոռ, լսում էին Ավետիսին: Եվ նա կարող էր նեղանալ նրանց մեծ համակայությունից, որ դեմք ուներ, ուներ ու սիրտ, որ պատասխանատու էր Ավետիսի վշտերի համար, ու Ավետիսը համոզված էր, որ իր վշտերից նրա սիրտն ավելի պիտի ցավի:

Եվ կարող էր խռովել Ավետիսը նրանից, և կարող էր նրա կողմից ու նրա հայացքով խղճալ իրեն, և կարող էր պահ տալ նրան իր մեծ վիշտը, իր հոր ու պապի պատկերները, և քրոջ՝ Գարանի, ու իր ներքին պատկերները…

Իսկ այստեղ՝ Բաթումում, շատ մարդ կար, և նրանք վարագուրել էին չորսբոլորը, ու դիմացը ամայություն էր: Նրանց լեզուն չգիտեր Ավետիսը, նրանց աչքերը չէր տեսնում Ավետիսը, նրանցից նեղանալ չէր կարող Ավետիսը… Նրանցից շատերը, ու նույնիսկ հայերը նրանց մեջ իրեն գաղթական էին անվանում անպատվության պես: Իրենց նման մի գաղթական՝ Ստեփան անունով, բնակվելու համար տեղ տվեց պարոն Զեմմելի երկհարկանի տան պատուհանների տակ: Ինքն ապրում էր կողքի նկուղում և աստիճանների տակ պահում էր ավելներն ու դույլերը: Ստեփանն ավելի շուտ էր գաղթել, և արդեն բավականին դասավորվել էր նրա կյանքը. որպես ապաստարանի վճար՝ ավլում էր պարոն Զեմմելի բակը, իսկ ցերեկներն աշխատում էր Մանթաշովի գործարանում:

Ավետիսը ևս աշխատանքի գնաց Մանթաշովի մոտ: Ցերեկները տակառներ էր կրում իր ուսերին, երեկոները Գարանին վերցնում էր շալակը և զբոսնում Սև ծովի ափերի սակավամարդ վայրերում:

Գարանը սարքում-մաքրում էր աստիճանների տակը ու սպասում եղբորը, որ նայի աչքերի մեջ, ճակատի քրտինքը սրբի, ջուր լցնի ձեռքերին:

Կոպեկը հազար էր Ավետիսի համար՝ կյանք էր բերում, շունչ տալիս ու ապաքինում մեջքի վերքերը:

ՀՐԱՀԱՆԳ

Առաջադրանքը կատարելու համար ուշադիր կարդացե՛ք տեքստը: Հարցերին սկսե՛ք պատասխանել այն ժամանակ, երբ տեքստի բովանդակությունն ամբողջովին հասկանալի կլինի:

Տրված պատասխաններից ընտրե՛ք միայն մեկ պատասխան և պատասխանների թերթիկի համապատասխան վանդակում նշե՛ք «X» նշանով:

(1) 36. **Պատմվածքի առաջին պարբերությունում գրողը.**

ա) Գեղարվեստականորեն նկարագրում է, թե ինչպես է պատմական ողբերգությունն ազդում սովորական մարդու կյանքի վրա:

բ) Խոսում է 1915 թվականի ողբերգական իրադարձություններին նախորդող դեպքերի մասին:

գ) Խոսում է պատմվածքի գլխավոր հերոսների ապագայի մասին:

դ) Մակերեսորեն ներկայացնում է փաստերը և համարյա չի օգտագործում գեղարվեստական լեզուն:

(1) **37. Ի՞նչն էր Ավետիսի տեղահանվելու գլխավոր պատճառը։**

ա) Ինքնափրկության բնազդը։

բ) Կատարված ողբերգության հետ կապված ծանր խոհերը։

գ) Քրոջ անբուժելի հիվանդությունը։

դ) Քրոջ նկատմամբ ստանձնած պատասխանատվությունը։

(1) **38. Ո՞ր արտահայտության մեջ է հեղինակը դիմում գեղարվեստական խոսքի միջոցների:**

ա) «Եվ կարող էր խռովել Ավետիսը նրանից, և կարող էր նրա կողմից ու նրա հայացքով խղճալ իրեն...»:

բ) «Նաև ցավում էին նրա անդամալույծ ոտքերը, որովայնն ու կուրծքը»:

գ) «Նրանց տեսնողներից յուրաքանչյուրը մի ծանրություն էր կրում կամ սրտի խորքում, կամ մեջքի վրա, կամ հիշողության շերտերում…»:

դ) «Նրանք ասես այն մազն էին, որի վրա վարսավիրը փորձում է նոր սրած իր ածելին»:

(1) **39. Հետևյալ խոսքերով ինչի՞ վրա է հեղինակը կենտրոնացնում ուշադրությունը. «Եղբոր ու քրոջ միացյալ կերպարանքը հիշեցնում էր ՄԱՐԴՈՒ վիճակը»:**

ա) Մարդիկ իրենց բաժին բեռը մշտապես կրում են իրենց կյանքի ճանապարհին:

բ) Մարդիկ փոխադարձ աջակցությամբ կարող են հաղթահարել ընդհանուր հիմնախնդիրները:

գ) Մարդկանց համար ուրիշների դժբախտությունը պարզապես ներկայացում է:

դ) Ճնշված մարդը ուրիշի մեջ մշտապես խղճահարության զգացում է առաջացնում:

(1) **40. Ո՞րն է Ավետիս Յափնջյանի <u>գլխավոր</u> նպատակը։**

ա) Կարեկցանքի արժանանալ։

բ) Հասնել նպատակին։

գ) Պայքարել գոյության համար։

դ) Քրոջը անվտանգ տեղ հասցնել։

(1) 41. **Ի՞նչն էր ստիպում Գարանին երգել։**

ա) Անվտանգ տեղ հասնելու հույսը։

բ) Եղբորը քաջալերելու ցանկությունը։

գ) Սեփական մեղքի զգացողությունը։

դ) Ֆիզիկական ցավի թեթևացումը։

(1) **42. Ո՞ր բառերն են արտահայտում Ավետիսի առանձնահատուկ վերաբերմունքը Գարանի նկատմամբ։**

ա) «Ամենաանպաշտպան»:

բ) «Անօգնական քույր»:

գ) «Թանկ բեռ»:

դ) «Խեղանդամ քույր»:

(1) **43. Ինչո՞ւ էր մարդաշատ միջավայրում Ավետիսն իրեն միայնակ զգում:**

ա) Ավետիսը չէր հասկանում այդ մարդկանց լեզուն:

բ) Ավետիսը քրոջը միայնակ էր զբոսանքի տանում:

գ) Ավետիսին օգնության ձեռք չէին մեկնում:

դ) Ավետիսի ցավը խորթ էր նրանց:

(1) **44. Ո՞ր արտահայտությունն է ցույց տալիս, որ ողբերգությունը կոփում է գլխավոր հերոսին կյանքը շարունակելու համար։**

ա) «Ավետիսը համոզված էր, որ իր վշտերից նրա սիրտն ավելի պիտի ցավի»։

բ) «Եվ ուժ էր տալիս ցավը, համառություն էին ծնում վերքերը, լողում էին Ավետիսի մկաններն ու շարժում նրան առաջ…»։

գ) «Լեռներում, ամայության մեջ Ավետիսի գերակա նմանակը կար՝ իրենից ավելի մոտ իրեն»։

դ) «Նրանց լեզուն չգիտեր Ավետիսը, նրանց աչքերը չէր տեսնում Ավետիսը, նրանցից նեղանալ չէր կարող Ավետիսը»։

(1) **45. Ինչո՞ւ է հեղինակն իր պատմվածքին տվել «Սովորական մարդու գինը» վերնագիրը։**

ա) Դրանով նա ընթերցողին ցույց է տալիս, թե ինչպես է բարձրանում մարդու գինը, երբ նա անշահախնդրորեն օգնում է սովորական մարդուն։

բ) Դրանով նա ընթերցողին ցույց է տալիս սովորական մարդու կենցաղային մարտահրավերների պարզունակությունը։

գ) Դրանով նա ցանկանում է ընդգծել, թե որքան կարևոր է սովորական մարդը աշխարհի համար։

դ) Դրանով նա ցանկանում է ընթերցողին ցույց տալ սովորական մարդու դժվարին կենցաղը։

(5) **46. Ո՞րն է հեղինակի գլխավոր ասելիքը, և ի՞նչ գեղարվեստական միջոցներով է այն հաղորդված։**

Նկատի՛ ունեցեք, որ 50 բառից պակաս պատասխանը չի ստուգվի։